ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2020-1

ք. Երևան «14» _01_ 2020թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս ԱԳՆ գլխավոր քարտուղար Վահագն Մելիքյանի, գործելով նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, և «ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս Դիվանագիտական դպրոցի տնօրեն Վահե Գաբրիելյանի, գործելով Դիվանագիտական դպրոցի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի (Հայաստանի դիվանագիտական դպրոցի)՝ «Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստում» ծրագրի շրջանակներում մինչև 40 մասնակիցների վերապատրաստման, դիվանագիտական կադրերի պատրաստման «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» ծրագրի շրջանակներում մինչև 24 մասնակիցների (համաֆինանսավորմամբ) և «Հյուպատոսական գործունեություն» ծրագրի շրջանակներում մինչև 15 մասնակիցների վերապատրաստման և նրանց ստացած գիտելիքների ստուգման կազմակերպման պարտավորությունները ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի 09.05.02.09 (Վերապատրաստման ծառայություններ) ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված դրամաշնորհը կազմում է 69,660,800 (վաթսունինը միլիոն վեց հարյուր վաթսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3 Պայմանագրով ամրագրված գումարի չափը դասընթացի ընթացքում նվազեցման ենթակա չէ:

3 ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և պայմանագրի պայմանները տարածվում են 2020թ. հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	ք. Երևան, Հ Վազգեն Սարգսյան 3,
Կառավարության շենք 2	Կառավարության շենք 2
Երևանի թիվ 1 գանձապետարան	Երևանի թիվ 1 գանձապետարան
Հ/Հ 900011196442	Հ/Հ 900018001470
ՀԱՎՀ 02527728	ՀԱՎՀ 02593734
ԱԳՆ գլխավոր քարտուղար	Տնօրեն
_____ Վ. Մելիքյան	_____ Վ.Գաբրիելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ